ՀԱՐՑԱԹԵՐԹ

1. Արտագրի՛ր և ըստ անհրաժեշտության՝ կետերի փոխարեն լրացրո՛ւ համապատասխան տառերը։

Ես գիտեմ, որ մեծահասակները թվեր շատ են սիրում: Երբ նրանց պատմում ես, որ դու նոր բարեկամ ես ձեռք բերել, նրանք եր...եք չեն հարցնում ամենա...ականի մասին: Եր...եք չեն ասի, թե ինչպիսի՞ ձայն ունի նա, ի՞նչ խաղեր է նախ...նտրում խաղալ, սիրո՞ւմ է թիթե... բռնել, ծառ բարձրանալ: Նրանք հարցնում են, թե քանի՞ տարեկան է նա, քանի՞ ե...բայր ունի, քաշն ինչքա՞ն է, ո՞վ է նրա հայրը և որքա՞ն է վաստակում: Դրանից հետո, կհավատա՞ք, եր...ակայում են, թե ճանաչեցին մար...ուն:

Երբ մեծահասակներին ասում ես, թե տեսար վար...ագույն աղ...սից շինված մի տուն, որի պատուհա...երին խորդենի կար, իսկ կտուրին՝ աղավնիներ, նրանք եր...եք չեն պատկերացնի այդ տունը: Նրանց պետք է ասես, որ տեսածդ տունը եռահարկ է, արժե երկու հար...ր միլ...ն դրամ: Մի...այն այդ ժամանակ նրանք ո...ևորված կբացա...անչեն. «Ի՜նչ գեղեցկություն, ի՜նչ չնաշխար...իկ տուն է դա»:

2. Շարադրանքից դո՛ւրս գրիր հետևյալ բառերի հոմանիշները.
գերադասել, գոչել, բնավ, պատկերացնել, կարևորագույն, տանիք, անզուգական, գեթ

3. Շարադրանքից դո՛ւրս գրիր հետևյալ բառերի հականիշները.
զրկվել, վատնել, այլանդակ, թշնամի, միշտ

4. Շարադրանքից դո՛ւրս գրիր շեշտափոխական հնչյունափոխությամբ կազմված 7 բառ կամ բառաձև՝ փակագծերում գրելով արմատի կամ հիմքի անհնչյունափոխ տարբերակը։

5. Շարադրանքից դո՛ւրս գրիր 9 տարբեր ածանցներով մեկական բառ՝ ամեն ածանցով կազմելով ևս մեկ բառ։

6. Շարադրանքից դո՛ւրս գրիր 6 բարդ կամ բարդ ածանցավոր բառ։

7. Շարադրանքից դո՛ւրս գրիր հետևյալ իմաստներն ունեցող բառերը. 1. «կավից սարքված շինաքար», 2. «զարդարական և եթերատու բույսի տեսակ»։

8. Շարադրանքում տեղ գտած պարզ բառերից ու արմատներից 6-ը որպես վերջնաբաղադրիչ օգտագործելով՝ կազմի՛ր դրանցով 1-ական այնպիսի բազմավանկ բառեր, որոնց հոգնակին կազմվում է *-եր* վերջավորությամբ։

9. Շարադրանքից դո՛ւրս գրիր 2 այնպիսի գոյականներ, որոնք կարող ես դարձնել բայեր։ Օրինակ՝ *քար > քարանալ*։

10. Շարադրանքից դո՛ւրս գրիր 5 անկանոն բայ։

11. Շարադրանքից դո՛ւրս գրիր 5 անկախ դերբայ (ոչ ձևաբայ)։

12. Շարադրանքից դո՛ւրս գրիր դերանվանական հոլովման ենթարկվող 5 բառ։

13. Շարադրանքից դո՛ւրս գրիր չեզոք սեռի 5 բայ։

14. Գրի՛ր շարադրություն՝ «Իմ սիրած գույնը» վերնագրով (1 – 1,5 էջ)։